ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հոկտեմբերի 15-ին Սրբոց աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու ուսնին Ամեն. Տ. Տեղակալի անօրէնութեամբ Մայր տաճարում հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ հանդուռեան պաշտօն կատարուեց Հանգ. Տ. Մատթէոս Ե. կաթուղիկոսի յիշատակին, նրա գերեզմանի վերայ նորին Սրբութեան անուանակոչութեան առիթով:

Սեպտեմբերի 26 և 27-ին Մայր Աթոռում հիւր էին Վիկոնտ և Վիկոնտէս Լորդ և Լէդի Ֆօլմաուտ իրանց որդու հետ, որ Զաքիզի համալսարանի ուսանող է:

Յարգելի հիւրերը ներկայացան և հիւրասիրուեցին Մայր Աթոռին նոր Մատենադարանում, ներկայացան Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսին, և ընդունեցին նորին Բարձր Սրբազնութեան այցելութիւնը: Այցելեցին ու տեսան Մայր Աթոռի և շրջակայքի ուշագրաւթեան արժանի հնութիւններն ու հատատաութիւնները և դոհ որոով մեկնեցին:

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼՍՈՅ.

Վարժարան, դպրոցական տարեշրջան 1910–1911.

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ուսին.

Վարժարան (*)

Մանչեր	Հատ	72
Աղջկանց		13
	Գումար	85

Այս վարժարաններէն 2 -ը բացուած են Եգիպտոսի Հ. Բ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ հաշուոյն ու անուանովը և կը կառավարուին ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ մատակարարութեամբը:

(*) Ընկերութիւնը այս վարժարաններէն զատ երկամսեայ շրջանով երկու Ամառն. Վարժապետանոցներ ալ ունի՝ մին Կարնոյ Երջանակին եւ միւսը Կիլիկիոյ մէջ, ուր մանկավարժական ու գիւղատնտեսական դասախօսութիւններ տեղի կունենան կարող մասնակցաներու միջոցաւ՝ ուսուցչական խումբին պատրաստութեանը համար: